

Նա ոտքի կանգնեց, ձեռքին բաժակի ձև տալով շուռ տուաւ գլխիս և ասաց. մկրտի ծառայս Աստուծոյ ի նոր գրական անուն Մախլաս:

— Պ. Աբգար, այդ թնչ անուն է:

— Այդ իմ հին անունն է. թէև ինձ պէտք չէ և մի քիչ հնացած, բայց ընդունիր:

Աբգարի հինը շատ նորերէց նոր է ու կմնայ և ես ուրախ ուրախ վեր թռայ տեղիցս ու գրիչս թաթախելով՝ ստորագրեցի

ՄԱԽԼԱՍ

«Աղադրօտապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական օնդումն են գրեց ու Էջմ. միարան Բարդուղիմէոս եպ. Գէորգեան:

Այս փոքրիկ գրքոյկը, որ սրբազան եպիսկոպոսը հրատարակել է ուսերէն թարգմանութեամբ հանդերձ, բացի մասնագիտական հետաքրքրութիւն ունենալուց՝ արժանի է ուշադրութեան և այն զօրեղ բողոքի շնորհիւ, որ հեղինակը բարձրացել է «Մշակ» լրագրի և Նաչիկ վարդապետ Դատեանի թեթեամիտ և անմիտ վերաբերմունքի դէմ դէպի Էջմիածինը: Խնդիրը նրանումն է, որ մի քանի տարի առաջ Էջմիածնի մօտ պեղումներ կատարուեցին և գետնի տակից դուրս եկան ահագին շինութիւնների հիմքեր և քարէ սիւներ ու զանազան առարկաներ. Գեր. Բարդ. եպիսկոպոսը կարծիք յայտնեց, թէ այդ հնութիւնները հին հայոց կռապաշտական մի մեհեանի տեղ յետագայում շինուած Չուարթնոց եկեղեցու հետքեր են: Նաչիկ վարդապետը, որ ի հարկէ ոչ մի ձեռնհասութիւն չունի դատելու այս խնդրի մասին, լուրեր էր տարածում, որ գտնուած շինութիւնները հին Էջմիածնի տաճարն է: Այսպիսի դաթակեցեցիքի վարմունքի դէմ է բողոքում հեղինակը: Ճաւալի է իհարկէ որ Էջմիածնի Սինօդն և պատշաճաւոր իշխանութիւնը իւր ժամանակին դրական միջոցներ չէին ձեռք առել զսպելու այդպիսի ոտնձգութիւնները:

ԸՆԹԵՐՑՈՂ

Իմ պատասխանը պ. Գ. Ենգիբարեանին

«Լումայում» տպուած պ. Գար. Մնգիբարեանի մատենագրական յօդուածը իմ հայերէնից ուսերէն լրակատար բառարանի մասին *) կարդացի մեծ հետաքրքրութեամբ: Պ. Մնգիբարեանը

*) «Լումայ» 1905 թ. մարտ, եր. 120—125:

բեանի նկատողութիւններից մի քանիսը ճիշտ են և ես շտապում եմ այդ հրապարակաւ յայտնել: Ժիշտ է պ. Ե-ի նկատողութիւնը, որ աղանձ բառի թարգմանութեան մէջ «молодая» բառը բոլորովին աւելորդ է: Ժիշտ է, որ «горе» բառը յոգնակի թուով անգործածական է, կամ աւելի ուղիղն ասելով, սակաւ գործածական է, ուստի և փոխանակ у каждого свои горя պիտի լինի у каждого свое горе: Ժիշտ է, որ մեր բառարանում ապառաժ բառի թարգմանութիւնը պակասաւոր է: Իրեւ առաջին նշանակութիւն բառիս հարկ է աւելացնել. «скальный, утесистый» և այն ժամանակ պ. Ե-ի առաջարկած «ապառաժ լեռներ» ոճը հեշտ կարելի էր թարգմանել: Պէտք է միայն աւելացնեմ, որ իմ բառարանում неумолимый տպագրական սխալ է փոխանակ неумолимый, որ պ. Ե. անմիջապէս հետևող ընրա սիրտն ապառաժ բար է դարձել онъ неумолимъ» օրինակից պիտի հասկանար: Ժիշտ է, որ «Ինչ այլանդակ դէմք ունի» պիտի թարգմանուած լինի կամ что за рожа, փոխանակ что за безобразная рожа-ի և կամ что за безобразное лицо, ինչպէս պ. Ե. առաջարկում է: Ուշադրաւ է պ. Ե-ի նկատողութիւնը «անթարի» բառի նկատմամբ: Պ. Ե. ասում է. «Անթարի» թարգմանում է женское верхнее платье, որ միանգամայն ծիծաղելի է: Անթարին հայերէն խօսք չէ, այլ պէտք է քրդերէն լինի. սա քրդի տղամարդի վերնազգեստ է: Ինչպէս պ. Ենգիբարեանի վճռական տոնից երևում է, նա հաստատ համոզուած է, որ անթարի տղամարդու զգեստ է: Սակայն իրեւ կնոջ զգեստ անթարի պատահում է ի միջի այլոց նաև պ. Պերճ Պոռհանի գրուածքներում: Տես Բղդէի եր. 358. «Բղդէն մօտեցաւ մեզ ծանօթ դժնիկ փշի թփին, քակեց թփի ճղբից Շողիկի անթարու (հագուստ է) ծուէնքը» և այլն: Յոյս ունիմ, որ այժմ իմ թարգմանութիւնը պ. Ե.-ին «միանգամայն ծիծաղելի» չի թուայ:

Այս բոլոր նկատողութիւնների համար ես պ. Ենգիբարեանին անչափ երախտապարտ եմ և շտապում եմ յայտնել խորին շնորհակալութիւնս, որ ծայրէծայր կարդալով իմ երկը, արել է իւր գնահատելի նկատողութիւնները:

Իսկ պ. Ե-ի մնացած բոլոր նկատողութիւնները, իմ կարծիքով, մասամբ բոլորովին սխալ և անհիմն են, մասամբ էլ աւելորդ և անտեղի: Պ. Ե. գրում է. «Ամառուայ շոգ, շոգեր պ. Դադրաշեանը թարգմանում է лѣтній жаръ, лѣтние жары առանց հասկանալու, որ արևի տաքութեան համար առաւ ցара է գործածում, եւ ոչ երբէք жаръ»: Եթէ պ. Ե. կարծում է,

որ մեզ մօտ, փոխանակ լէտնիе жары պիտի լինէր լէտնիја жары, սխալուով է, որովհետեւ շոգ մաքով եղակի թուով անխտիր գործ են ածուով жаръ և жара բառերը, իսկ յոգնակի թուով գործածական է միմիայն жары, սեռական հոլ. жаровъ բառը, ուրեմն լէտնիе жары, ինչպէս մեր բառարանում կայ: Այս առթիւ մեզ ներելի լինի առաջ բերել մի քանի ուսուերէն օրինակներ, որոնք գրական և խօսակցական լեզուի մէջ խիստ գործածական են:—Лётний жаръ. Полдневный жаръ. Некуда дѣваться отъ жару! Работать на жару. Скоро двѣнадцатый часъ... теперь самый жаръ. Несносная жара. Жара стоитъ, спала, свалила. Жара палить. Во время лѣтнихъ жаровъ. Въ началѣ августа жары часто стоятъ нестерпимые. Июльскіе, июньскіе жары. Тропическіе жары. Այս բոլոր օրինակները մենք առաջ բերինք ակադէմիական բառարանից *), որի կազմողներն էլ առաջ են բերել ուս հեղինակներին: Սոյն այս բառարանում պ. Ե. Կարող է կարգաւ жара, ы, ж. во мн. ч. жары, овъ (см. жаръ). Жаркое лѣтнее время, жаркая погода днемъ (հր. 218) Жаръ. То же, что жара (ապա հետևում են այս բառի միւս նշանակութիւններն ևս). Жары, овъ,—жаркіе дни, слѣдующіе безъ перерыва (ср. единств. ч. жаръ и жара) (հր. 233—4): Յոյս ունիմ, պ. Ե. համոզուեց, որ մեր բառարանում ոչ մի սխալ չկայ: Բայց թերևս պ. Ե. հարցնէ, թէ ինչու жара բառը մեր թարգմանութեան մէջ բացակայում է: Արդ, եթէ ես թարգմանած լինէի լէտնիја жара, լէտнiе жары և կամ лѣтний жаръ, лѣтнiя жара և лѣтнiе жары, հայ ընթերցողը, անծանօթ լինելով վերոյիշեալ բերականական արտուղութեան հետ, որի հետ ըստ երևութիւն, անծանօթ է նաև պ. Ե., անպայման պիտի շփոթուէր և մեզ մօտ տպուածը տպագրական սխալ պիտի համարէր: Ուստի և միակերպութեան համար մենք միայն թարգմանեցինք лѣтний жаръ, лѣтнiе жары:—Արախճին,—չին քոլպакъ (работника); ночной քոլպакъ (բառար. հր. 105). պ. Ե. նկատում է. «արախչին քոլպакъ է թարգմանում, թէև աւելի հեշտ է чепчикъ, և յետոյ՝ քոլպакъ ունի և փոխաբերական նշանակութիւն»: Այս նկատողութիւնը բոլորովին սխալ է, որովհետեւ արախչինը կրում է տղամարդը, իսկ чепчикъ-ը կինարմատը: Իսկ թէ քոլպакъ-ի որ նշանակութիւնն եմ աչքի առաջ ունեցել, դորա մասին բաւականաչափ հոգացուած է,

*) Словарь русск. яз., сост. вторымъ отд. Имп. акад. наукъ, т. II., вып. I. С. П. Б. 1897.

ինչպէս ընթերցողը պարզ տեսնում է մեր բառարանից առաջ բերած տեղից: Միայնում է պ. Ե. կարծելով, թէ «ասպար գէնք կը նշանակէ»: Ասպար միմիայն վահան է նշանակում և պ. Ե.-ի առաջ բերած «և ասպարաւ քով օգնեա մեզ» օրինակն էլ հէնց այդ է ապացուցանում:

—Աղօթարար молящій Бога; богомолецъ; մնամ աղօթարար Н քահանայ, եպիսկոպոս слуга и богомолецъ священникъ, епископъ Н.» (բառար. եր. 17), պ. Ե. ցանկանում է իմանալ, թէ ես որ մատենագրից եմ վերցրել աղօթարարի համար слуга խօսքը: Ամենայն ուրախութեամբ կատարում եմ պ. Ե.-ի ցանկութիւնը: Բացել Я. К. Гротъ-ի կաղնած սքանչելի բառարանում *) богомолецъ բառը, որի տակ գտնւում է «слуга и богомолецъ», такъ подписываются духовныя лица:

Դառնանք այժմ պ. Ե.-ի երրորդ կարգի նկատողութիւններին: Ոստելով բառարանիս այս կամ այն տեղի վերայ, պ. Ե. այդ տեղերն առաջ է բերում փոփոխութիւններով և կրճատումներով, որոնք ընթերցողին մեծամեծ թւարկածութիւնների առիթ են տալիս: Պ. Ե. գրում է. «Ախոռ (Դաղբաշեանը) թարգմանում է конюшня, хлѣвъ և երկրորդ նշանակութիւնը դնում է ясли և այլն, մինչդեռ ախոռ նախ կը նշանակի стоило, ясли և ապա զով և այն էլ միայն գաւառաբարբառներում ախոռ конюшня կը նշանակէ»: Այս տողերը կարդացող ընթերցողը կը կարծէ, թէ стоило բառը իմ բառարանում չկայ և պ. Ե. հարկ է համարել ինձ սովորեցնել: Բայց ան թէ ինչ է տըպուած իմ բառարանում. Ախոռ 1. конюшня, хлѣвъ; 2. ясли, стоило (բառար. եր. 8): Պ. Ե. ասում է, որ ես «ամօթ բառը թարգմանում եմ совѣсть»: Ահա թէ ես ինչպէս եմ թարգմանել ամօթ բառը. Ամօթ 1. стыдъ; совѣсть; ամօթ չունես у тебя стыда нѣтъ (или у тебя совѣсти нѣтъ?): Ամօթ չէ՞ քեզ այդպէս խօսել не стыдно ли тебѣ такъ говорить?... (միւս օրինակները թող ընթերցողը կարդայ, տեղի սղութեան պատճառով անհնար է առաջ բերել): 2. позоръ, срамъ; ամօթ և խայտառակութիւն ужасный позоръ. 3. постыдный, позорный, срамный, зазорный.

Պ. Ե. ասում է, որ ես անըաւելի թարգմանել եմ безпредѣльный, безконечный և այդ բոլորովին սխալ համարելով, զարմանք յայտնում, որ ես չեմ յիշում ծննդեան շարականը և

*) Словарь русс. яз. Сост. П. Отд. Имп. ак. наукъ, вып. I. С. П. Б. 1901.

իւր կողմից աւելացնում է, որ անբաւելի պիտի թարգմանած լինէի необъятный, необъемлемый. ներելի լինի մեզ յայտնել, որ необъятный բառը մեր թարգմանութեան մէջ կայ և զարմանալի է որ այդ չէ նկատուել: Իսկ безпредѣльный, безконечный բառերն էլ հոմանիշ են необъятный բառի: Ուրեմն սխալի մասին խօսք չէ կարող լինել: Պ. Ե. ասում է, որ ես արանը «միմիայն промежутокъ» եմ թարգմանել, մինչդեռ «պէտք էր մի քանի բառեր ևս դնել, прохоть, рядъ». նախ նկատեմ, որ արանք երբէք рядъ չէ նշանակում: Իսկ զալով իմ թարգմանութեանը, ես ունիմ ոչ միայն պ. Ե-ի առաջարկած прохоть բառը, այլև «մի քանի բառեր ևս», ինչպէս щель; сквозь, черезъ; между, промежду, промежъ և բազմաթիւ մեկնական օրինակներ, որ ընթերցողը կը գտնէ բառարանիս 106 երեսում: Այս նկատողութեանը նման է նաև պ. Ե-ի նկատողութիւնը այսուհետեւ բառի մասին: Ես ունիմ ոչ միայն съ сегодняшняго дня, որ պ. Ե. զուր տեղը սխալ է համարում, այլ և впродъ, вперёдъ; послѣ этого խօսքերը բազմաթիւ օրինակներով հանդերձ, որ պ. Ե. չէ յիշել:

Ալանի безсольный, песоленный; посоленный, непосоленный, (բառար. եր. 35). Այս առթիւ պ. Ե. բացականչում է «Անալի թարգմանել է միայն безсольный, несоленный և բոլորովին չգիտէ, որ ջրի համար օրինակ անալի ոռւերէն ուղղակի կը նշանակի прѣсная. պ. Ե.-ի ասածը զուտ ճշմարտութիւն է: Յիրաւի ես չգիտեմ, թէ հայերէն կարելի է ասել ալանի ջուր: Հստ իմ գիտութեան հայերէն ասում են քաղցր ջուր: Միայն ոռւերէնը քաղցր ջրի մասին ունի իրեն յատուկ прѣсный ածականը, որ ջրի մասին խօսելով ֆրանսիացին թարգմանել է doux (տես Մակարովի ոռւ. ֆրանս. բառարանը), իսկ գերմանացին süß (տես Պալլոյսկու ոռւ. գերման. բառ.):

Արծարծել 1, раздывать, раздуть; կրակն արծարծել раздуть огонь; 2, возбуждать, возбудить; воспламенять, воспламенить; հարցն արծարծել возбудить вопросъ (բառարան եր. 144). պ. Ե. ասում է, իբր թէ ես արծարծել разсуждать եմ թարգմանել:

—Անցեալ ամառ նա այստեղ էր прошедшимъ лѣтомъ (или въ прошедшемъ лѣтѣ) онъ былъ здѣсь (բառար. եր. 19): Պ. Ե. նկատում է. «պ. լէկսիկոգրաֆը թարգմանում է въ прошедшемъ лѣтѣ, որ բոլորովին անգործածական ձև է և ոուրևից նոյն միտքը յայտնելու համար ասում է въ прошедшее лѣто» ինչպէս ընթերցողը տեսնում է, պ. Ե. իմ թարգմանութիւնը:

նը կհաստ պոստ է մէջ բերել: Բայց որ ոտան իրաւ ասում է
 прошедшимъ лѣтомъ, այդ պ. Ե. կարող է կարգալ ամեն մի
 ուս թերթում, օր. Сынъ Отечества 12-го апр. 1905 г. №
 48: «дѣло Минскаго, обвиняемаго въ убійствѣ проишлымъ лѣ-
 томъ конвойнаго офицера»—իբրև վերջին նշանակութիւն
 ազատել բայի ես դրել եմ ծնեցնել, ոսերէն повивать, при-
 нимать младенца. պ. Ե.-ի նկատողութիւնից երևում է, որ
 նա չգիտէ կամ առնուազը չէ գիտակցում, որ ոսերէն ծնեցնել
 ներգործական բայ գոյութիւն չունի, ուստի և ազատել այս
 մաքով միմիայն կարելի է թարգմանել այնպէս, ինչպէս ես եմ
 թարգմանել: Այդ դեռ ոչինչ: Պ. Ե. շարունակում է. «ծննդա-
 կանի համար ժողովուրդը ասում է, որ ազատուեց, այսինքն ծը-
 նեց»: Բայց մի քանի տող ներքև մեր բառարանում պ. Ե. ան-
 շուշտ կարդացել է ազատուել 2, разрѣшиться отъ бремени
 (сыномъ, дочерью):

Պ. Ե. ասում է, որ իմ բառարանի մէջ «չկան շատ գրա-
 կանական և ժողովրդական բուն հայերէն խօսքեր»: Բայց ցաւն
 այն է, որ պարոնի թուած բառերից ամենակարևորները իմ
 բառարանում կան: Ահա այդ բառերն իրանց թարգմանու-
 թեամբ հանդերձ. Անշշունջ безшопотный, тихій (բառար.
 68. Անսուտ неложный, вѣрный, правдивый, (անդ, եր. 74).
 Ամբարտակ плошина, запруда, дамба. ամբարտակներ կանգ-
 նեցնել строить, построить плошины. ջրի թափից ամբարտա-
 կը պատուեց отъ напора воды плошина прорвалась (անդ,
 եր. 20) Արջառ молодой быкъ или волъ... (անդ, եր. 118):
 Այս բոլոր բառերը իմ բառարանում տպուած են թանձր տա-
 րերով մաքուր թղթի վերայ:

Ամբիծք բառը յիրաւի բացակայում է մեր բառարանում
 և այս մենք ցաւօք սրտի նկատել էինք և յաւելուածում առաջ
 կը բերենք: Չկան մեր բառարանում պ. Ե.-ի յիշած ասղաման
 և արիւնատնեչ բառերը, որոնց համար մենք շնորհակալ ենք
 պ. Ե.-ից: Իսկ պարոնի յիշած միւս բառերը. աղէբէկ, աշ-
 խատ, անսուգ, աստի, անգոյ, անխաղ, ապէնխաղ, անտի, ան-
 դէն, անդրէն ևայլն չեն մտել բառարանի մէջ, որովհետև գրա-
 բառ և աշխարհաբառում միանգամայն անգործածական են:
 Այս նկատմամբ պէտք է յայտնեմ, որ ես կազմել եմ աշխար-
 հաբառից ուսերէն բառարան: Այդ պատճառաւ և իմ բառա-
 րանի մէջ մտել են աշխարհաբառ բառերն և ոճերը: Իսկ գրա-
 բառ բառերն և ոճերը, որքան էլ նրանք «հրաշալի» լինէին,
 չէին կարող մտնել մեր բառարանի մէջ, որովհետև այդ կը

նշանակէր անիմաստաբար դրաբառն և աշխարհաբառը միմեանց խառնել և բառարանն անգործածելի դարձնել: Այս իսկ պատճառաւ ես իմ բառարանում չեմ նշանակել այն նշանակութիւնները, որ այցելութիւն առնել և անխուլ բառերը գրաբառում ունեն: Ինձ համար միայն անհասկանալի է, թէ ինչպէս պ. Ե. սխալ է համարում այն, որ ես ազարակ քառի առաջին նշանակութիւնը земля եմ դրել, քանի որ այս բառն այս նշանակութեամբ բոլոր կրօնական դասագրքերում գործ է ածւում և հէնց իմ բառարանում էլ աւետարանից օրինակ կայ բերած:

Գանք այժմ պ. Ե.ի վերջին տեսակի նկատողութիւններին: —Արտասուարեր выдѣляющій слезы; возбуждающій слезы (բառար. 120): Պ. Ե. նկատում է. «Արտասուարեր բառի առաջին նշանակութիւնը նրբութիւնից զուրկ խօսքով է թարգմանում выдѣляющій слѣзы, որ օրինակ եթէ մէկը կամենայ «արտասուարեր տեսարան» ոճը ըստ պ. Դաղբաշեանի թարգմանել, պիտի ասէր сцена, выдѣляющая слезы. պարզ է, որ շատ այլանդակ ուսուցիչն կը լինէր»: Այո, շատ պարզ է: Մի ուրիշը ըստ իմ բառարանի պ. Ենգիրբաբեանի առաջարկած ոճը կը թարգմանէր. «сцена возбуждающая слезы» և այս կոկիկ ուսուցիչն կը լինէր: Նման նկատողութիւն պ. Ե. արել է և ամբարիշտ բառի նկատմամբ: Նախ և առաջ ամբարիշտ գործ են ածում հասակաւորների և ոչ երեխաների մասին: Երկրորդ անհասկանալի է, թէ ինչո՞ւ ամբարիշտ երեխայ պ. Ե. թարգմանում է «беззаконный мальчикъ», քանի որ իմ բառարանում նա կարդացել է. ամբարիշտ... 2, сварливый; ссорливый; неуживчивый; նա ամբարիշտ մարդ է, ոչ զբի հետ եօլա չէ գընում онъ сварливый человекъ, ни съ кѣмъ не уживается (եր. 19):

Սխալւում է պ. Ե. կարծելով, թէ անխափան ненарушимый է նշանակում: Մեր թարգմանութիւնը բոլորովին ուղիղ է: Անտեղի է նաև պարոնի նկատողութիւնը անսալ բառի վերաբերմամբ: Իսկ անտեղեակ և անծալ բառերի թարգմանութիւններին կարելի է աւելացնել պ. Ե. ի առաջարկուած неосвѣдомленный և несложненный բառերը:

Պ. Ե.-ի պահանջը, ոճերն և օրինակները մատենագիրներէից, այն էլ գրաբան գրող մատենագիրներից առնել, կենդանի բառարանի համար անգործադրելի է: Ամենալաւ բառարանագիրները, ինչպէս Դրօտ, Մակարով, Պաւլովսկի, օրինակներն

առնում են խօսակցական լեզուից: Իսկ թէ իմ առաջ բերած
ոճերը գոհե՞ր կական են, այդ պ. Ե. չէ ապացուցել:

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

ԵՄՆՕԹ. Տպագրելով պ. Դաղբաշեանի պատասխանը պ. Ենգիբարեանին,
որի յօդուածի նպատակը միմիայն օգտակար լինելն է եղել հեղինակին, ինչպէս
վերջինս շատ տեղ խոստովանում է այդ, ամենուրէլ չենք համարում նկատելու,
որ պ. Դաղբաշեանը ոչինչ չէ ասում պ. Ենգիբարեանի այն շատ կարեւոր նկա-
տողութեանց դէմ, թէ հին բառաբանների սխալները կրկնում են և թէ բառերի
երկրորդական նշանակութիւնները շատ անգամ առաջին տեղն են դրուած լի-
նում: Բացի այդ՝ պ. Դաղբաշեանը սխալում է տեսելով, թէ աղբերէկ, անսուտ,
անգոյ, անտի, աստի բառերը իբր թէ աշխարհաբառում և զբաղառում միան-
գամայն անգործածական են: Մի՞թէ պ. Դաղբաշեանը լուրջ կհրպով է կարծում,
որ բանսուտ բերանով, անսուտ լեզուով ոճեր չկան զբաղառում, որպէս և ան-
տի, աստի խօսքերը: ԽՄԲ.

ՄՍԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ

ԼԵՒՈՆ ԽԱՆՍԱՆԱՄԵԱՆ. Զաքարիա Զազեցու օրերը. պատմ.
վէպ. 1905. Ս. Պ. Բ. (1 ռ.).

Գ. Ե. Ուրուանկարներ, 8 վէպիկներ. Բագու 1904 (25 կ.)

ԲԱՐԴ. ԵՊՍ. ԳԷՈՐԳԵԱՆ. Վաղարշապատը և ս. Էջմիածինը ի-
րենց սկզբնական տեղումն են. արտատպ. Տարաղից և
Արարատից. Մոսկուա 1905 (20 կ.)

ԿՕՆԱՆ ԴՈՅԼ. Դեղին դիմակաւորը. թրգմ. Ն. Բ. Նիկողոս-
սեան. Ալէքս. 1905 (7 կ.)

ԶՕՆ ՄԻԼԼԷՐ. Նորահաս օրիորդներին բարեկամական խոր-
հուրդ. թրգմ. Ն. Բ. Նիկողոսեան. Ալէքս. 1905 (10 կ.)

ԱՏՐՊԵՏ. Երկերի ժողովածու. հատոր III Ալմաստ. վէպ բարձր
Հայոց կեանքից. Բ. տպ. Թաւրիզ 1905 (1 ռ.)

Ռոստամ Զալ. ժողովրդական վէպ մոկաց բարբառով. գրի ա-
ռաւ Դար. Վ. Յովսէփեան. արտ. «Ազգ. Հանդիսից».
Թիֆլիս 1905 (50 կ.):

Վիճակացոյց Թաղային վարժարանաց Կոստանդնուպոլսոյ. պատ-
րաստեալ յուսումնական խորհրդոյ, հրամանաւ Տ. Տ. Մա-
ղաքիա ս. Պատր. հօր. վիճակ 1905 յունուար 1-ի: